

զինուորներ զրկեց մեր դէմ, որոնք մեզ ձերբակալեցին Սպերի մէջ, եւ առաջնորդեցին դէպի Կարին. եւ հոն զիս միջնարեւոյն մէջ պահեցին, ըսելով թէ կ'ուզեմ Ֆրանկներու երկիրն երթալ: փաշան ըսաւ. Միջնարեւոյն մէջ կեցիր, մինչեւ որ քու մասիդ Սուլթանին զրեմ. եւ պիտի տեսնեմ ինչ պիտի հրամայէ, այնպէս պիտի ընեմ: Ուստի բանտարկուած մնացի ամիս մը այդ միջնարեւոյն մէջ. եւ տասներկու քսակ դրամի կամ 24,240 լիւրէրի (6060 Nummorus realim seu pezzi d'otto) կաշառքով միջնարեւոյն դուրս հանեցին զիս եւ պահեցին Կարնոյ քաղաքին մէջ ուրիշ եօթն ամիսներ, մինչեւ որ երեք քսակներ եւս կամ 1500 դահեկան ծախսեցի, եւ նոյն փաշայէն հրաման առի ազատօրէն մեկնելու: Այնտեղէն ելլելով գացի Տիգրանակերտ: Մինչ այդ Կ. Պոլսոյ մէջ Հայն այն Պոստով՝ խօսած էր իմ մասիս Հիւսէին Աղայի հետ, որ փեսան է Մահմուտ Աղայի, ըսելով. Գիտցիր, ո՛վ Տէր Աղա, որ մեր Հոգեւոր Տէրը ուրիշ ուղիով կ'ուզէ շարունակել ճամբան դէպի Իտալիա: Այն ատեն անմիջապէս Հիւսէին Աղան՝ Սուլթանէն հրամանադիր մը ստանալով. Տիգրանակերտ մեր մօտ իբրեւ պատուիրակ զրկեց անոր ծառաներէն մէկը, որպէսզի մեզ Կ. Պոլիս առաջնորդէ: Սա մեր քով հասնելով դարձեալ արդիւնեց մեր ճամբան: Այս պատուիրակը եօթն ամիս աստ ու անդ մեր հետ ընակեցաւ, ոչ թէ բռնութեամբ, այլ սիրով, մինչեւ որ մեզ առաջնորդեց Կ. Պոլիս, ուր մտանք Հոկտեմբեր ամսոյն եւ տեսանք Հիւսէին Աղան եւ Մեծ Եպարքոսը, որոնք մեզ մեծ սիրով ընդունեցան. եւ շատ ցաւ յայտնեցին Կարնոյ փաշային արարքին համար. եւ ինծի խոստացան, երբ այդ փաշան Բ. Դուռը վար, հատուցանել տալ ինչ որ ինձմէ առած էր: Ով հոգեւոր դաւակա, ինչ ընեմ, ես միշտ կ'աճապարեմ եւ կը ջանամ Հոռոմ ժամանել. սակայն ստանան. շարունակ թշնամական, աղիտարեք թակարդներ կը լարէ իմ դէմս: Բայց ես կը յուսամ Աստուծոմէ՛ թէ անոր գլուխը պիտի ջախջախեմ եւ Հոռոմ պիտի հասնիմ: Նաեւ գիտցիր, ով հոգեւոր դաւա-

կըս, թէ այս ձմեռ պիտի մնամ հոս, Կ. Պոլիս, գարնան պիտի երթամ Զմիւռնիա, պարտքերուս համար: Հոն, Տէր Աստուած մեզ առաջնորդէ այն բանին, որուն ինք կը հաճի: Ով սիրելի որդեակ, դուն լաւ գիտես՝ թէ ինչպէս տասներեօթ տարի առաջ ես այնչափ նուէրներ պատրաստած էի եւ մինչեւ Զմիւռնիա բերած էի, որպէսզի նաևով դէպի Հոռոմ ճամբորդէի, եւ թէ ինչպէս այն ժամանակ արգելքի հանգիստած էի, Եղիազարի հերձուածին հետեւանքով, եւ այս պատճառաւ յայնժամ հինգ տարի այս մեծ քաղաքին մէջ մնացի եւ երկու տարի ալ Աղբիանուպոլիս եւ ուրիշ տեղեր շրջեցայ, մինչեւ որ ձեռք բերի ինչ որ պէտք էր այդ խնդրին կարգադրութեան համար: Ահա թէ ինչո՞ւ այդ պատրաստուած նուէրները, որոնք 700 թուման կամ 11,000 սկուդ կ'արժէին, այս քաղաքը բերած եւ ծախսած էի: Եւ ապա այդ հերձուածը նուաճելէ ետք, վերադարձած էի մեր Սուրբ Աթոռը, եւ մեր պաշտօնեաներէն իւրաքանչիւրը իր պաշտօնին զըլուխը դրած էի: Հոռոմ պիտի մեկնէի ուրիշ յարմար նուէրներով: Սակայն, ինչպէս քեզի ծանօթ է, նաեւ այդ անգամ արգելքի բախած էի Երեւանի Պանին կամ Փոխարքային թշնամութեանց հետեւանքով: Այդ պատճառաւ դացած էի պարսից Շահին մօտ եւ յաջողած էի իշխանութիւնէ զրկել տալ այդ Պանը, եւ անոր տեղը նոր խան մը կարգել տուած էի: Գեղի լաւ ծանօթ են այս եւ ուրիշ նման դէպքեր, որոնք մեզի հանդիպեցան: Ի՞նչ ըսեմ, եթէ ոչ, օրհնեալ եղիցին կամք Տեսան, որ մեզ արժանի կը համարի տանջուելու, եւ այդ պատճառաւ թոյլ կու տայ որ չար սատանան այնքան եւ այնքան կերպերով մեզ ձաղկէ: Բայց պարտական եմ այս ամէնը տանիլ ուրախութեամբ, որպէսզի Ողորմածն Աստուած գթայ մեզի եւ իրականացնէ մեր բաղձանքները: Ով սիրելի դաւակա, գրած էիք ինծի, որ աճապարեմ Հոռոմ ժամանել: Առ այդ կ'ըսեմ, արդեօք հիմա՞ պարտիմ աճապարելու սկսիլ, միթէ քան տարիներէ իվեր չե՞մ աճապարեք եւ չե՞մ պատրաստուիր զայդ կատարելու: Սակայն ինչ ընեմ, երբ